# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2012թ. թիվ 221-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ
ՄԱՐԶԱՅԻՆ ԹԻՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությանը և աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N 281-Ն որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում ստեղծել աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմ՝ համաձայն հավելվածի:

2. Աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմին լիազորել.

1) ապահովել նպաստավոր միջավայր աղետների ռիսկերի նվազեցման մարզային և համայնքային խնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ կառույցների համար՝ աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության և Հյոգոյի գործողությունների ծրագրի առավել արդյունավետ իրականացման նպատակով,

2) ներկայացնել աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրները աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմում՝ մասնակցային եղանակով լուծման ճանապարհները որոշելու և դրանց իրականացմանը հետամուտ լինելու նպատակով,

3) նպաստել և օժանդակել աղետների ռիսկի նվազեցման գործառույթների իրականացմանը մարզային ու համայնքային մակարդակներում:

3. Աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմին՝ մինչև ս/թ. հոկտեմբերի 30-ը մշակել թիմի գործունեության կանոնակարգը և ներկայացնել մարզպետի հաստատմանը՝ նախօրոք, ԱՌՆԱՊ հիմնադրամի միջոցով, համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարների հետ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր